

ՏԵՂԵԿԱՆՔ

2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԻՐԱՌՎԱԾ ՀԱՄԱՆԵՐՄԱՆ ԱԿՏԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՄԱՆԵՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԹՎԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

➤ ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄՔ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

2021 թվականի ապրիլի 5-ի դրությամբ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի օպերատիվ տեղեկատու քարտադարանի տվյալներով «էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» օրենքով համաներում է կիրառվել 4976 անձի նկատմամբ, որոնցից հետագայում հանցանք են կատարել 1152-ը, իսկ նրանցից 249-ը՝ երկու և ավելի անգամ:

ԱՌԱՆՁԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՆՈՒԹՅԱՄԲ

Նախորդ համաներման ակտի հիման վրա ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներից ազատվել է թվով 607 դատապարտյալ, թվով 501 դատապարտյալի պատժաչափը կրճատվել է, որի արդյունքում թվով 73-ը ազատվել է: Համաներում է կիրառվել պրոբացիայի շահառու հանդիսացած 2874 անձի նկատմամբ:

➤ ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄՔ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Հաշվի առնելով, որ հնարավոր չէ տարանջատել ՀՀ քրեական օրենսգրքի 327 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքը կատարվել է պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից խուսափելու, թե հայտարարված վարժական հավաքից և (կամ) զորահավաքային զորակոչից խուսափելու եղանակով, հետևաբար, ըստ օպերատիվ տեղեկատու քարտադարանում սույն թվականի ապրիլի 5-ի դրությամբ առկա տվյալների, նախատեսվող համաներման շահառու կարող է լինել մինչև 2020 թվականի սեպտեմբերի 26-ը ներառյալ 27 տարին լրացած, ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով հետախուզման մեջ գտնվող առավելագույնը 5131 և դատապարտված՝ առավելագույնը 124 անձ:

Առանձին տվյալներ են առկա ընթացքի մեջ գտնվող քրեական գործերով, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկում գտնվող և պրոբացիայի շահառու հանդիսացող անձանց

մասով: Մասնավորապես՝ 327-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել և ընթացքի մեջ է գտնվում **261 գործ**, դրանք դեռևս դատարան չեն ուղարկվել: **18 քրեական գործ դեռևս գտնվում է դատարանների վարույթում:**

01.04.2021թ. դրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 327 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն կատարելու համար ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պատիժ է կրում 1 դատապարտյալ: 05.04.2021 թվականի դրությամբ վերահսկողությունը կարող է դադարեցվել **15 շահառուի** նկատմամբ:

Միաժամանակ հարկ է ընդգծել, որ որ ներկայացված թվերը համաներման հնարավոր շահառուների նախնական թվերն են, քանի որ յուրաքանչյուր դեպքով պետք է դիտարկվի համաներման կիրառելիության հարցը և, ըստ այդմ, իրավասու մարմնի կողմից որոշում կայացվի: